



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՑՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐՋՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտացքի մարզի Նոր Երջնկա համայնք
ՀՀ, Կոտացքի մարզ, գ. Նոր Երջնկա, 2 բղ. փ., 33, (0232) 3-67-91, noerzrnka-village@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Ս
07 ՓԵՏՐԿԱՐԻ 2019թվականի N 7**

**ՆՈՐ ԵՐՋՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին 16-րդ հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ 2 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

- Կոտացքի մարզի Նոր Երջնկա համայնքի կամավոր խնդիրները սահմանելու և դրանց լուծմանն ուղղված սեփական լազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին:
- Նոր Երջնկա համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին:
- Նոր Երջնկա համայնքի 2018 թվականի բյուջեի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
- Նոր Երջնկա համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
- Նոր Երջնկա համայնքի սեփականությունը հանդիսացող 1-ին փողոցի 27 շենքը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու բույլությունը տարու մասին:

Կողմ -6

Դիմ -0 Զերնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՇՈՎԱԿ

ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈԱՄ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱՋԻԿ

ՄԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻՔԵԿ

ՄԱՐԳԱՅՅԱՆ ՄԵԿԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵԿԱՎԱՐ

Հ. Քոչարյան



ԱԼԻԽԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐՋՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երջվկա համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Նոր Երջվկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91, norerznka-village@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ
07 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 8

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐՋՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ
ԽՆԴՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂԱԿԱՌ ՍԵՓԱԿԱՆ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկանարկվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ, 11-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երջվկա համայնքի կամավոր խնդիրները և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը՝ **համաձայն N 1 հավելվածի:**
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երջվկա համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամակոր խնդիրների լուծման չափորոշիչները՝ **համաձայն հավելված N 2-ի:**
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6

Դեմ -0

Զետնապահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳԱՄԴԱՐՅԱՆ ՇՈՎԱԿ

ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈԱՄ

ՄԵՍՐՈՎՅԱՆ ԵՐԱԶԻԿ

ՄՄՀԱԿՅԱՆ ԶԱՆԻՔԵԿ

ՄԱՐԳԱՅՅԱՆ ՄԵՎԱԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԱԼԻՍԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Ա. Գևորգ Մանուկյան

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԳՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՂՐԱՆՑ ԼՈՒՇՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ
ԼԻԱՑՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Նոր Երգնկա համայնքի կամավոր խնդիրները, ինչպես նաև կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երգնկա համայնքի (այսուհետ՝ համայնքի) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանուն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված համայնքի կամավոր խնդիրների սահմանման լիազորության իրացումը, ինչպես նաև դրա հիման վրա, համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների համար ստեղծել ինստիտուցիոնալ պայմաններ, կամավոր խնդիրներից թիող սեփական լիազորությունների իրականացման համար:

3. Սույն կարգի խնդիրներն են.

1) ըստ համայնքի առանձնահատկությունների սահմանել համայնքի կամավոր խնդիրները.

2) հաստատել կամավոր խնդիրների լուծումը ենթադրող սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգն ու պայմանները.

3) սահմանել կամավոր խնդիրների լուծմանը միտված համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընթացակարգային գործառությունները.

4) սահմանել կամավոր խնդիրների լուծման նպատակով ֆինանսավորման աղբյուրները և ֆինանսավորման ընթացակարգերը:

II. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՂՐԱՆՑ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Համայնքի կամավոր խնդիրներն այն խնդիրներն են, որոնցով համայնքային կյանքի բնականու ընթացքը ուղղակիորեն պայմանավորված չէ և կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

5. Համայնքի կամավոր խնդիրների սահմանման և դրանց իրականացման նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ պահպանելով համայնքի կենսագործման համար անհրաժեշտ լրացուցից պայմաններ:

6. Համայնքի կամավոր խնդիրներն են.

1) բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.

2) արեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացման աջակցումը.

3) հանրակրթական դպրոցի (դպրոցների) գործունեության աջակցումը.

4) նոր աշխատատեղերի ստեղծման նպատակը.

5) վճարվի հասարակական աշխատանքների կազմակերպումը.

6) հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը.

7) զուղաւոնտեսական աշխատանքների իրականացմանն աջակցելը.

8) ագրարային կանոնների պահպանման աշխատանքների կազմակերպումը.

9) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին (բնակչության) սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը.

10) պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետության կողմից հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը:

III. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՀԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Համայնքի կամավոր խնդիրների լուծումն ապահովելու նպատակով, սույն կարգով սահմանվում են համապատասխան սեփական լիազորություններ: Այդ նպատակով սահմանվող սեփական լիազորություններն են.

1) կազմակերպում և իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.

2) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

3) նպաստում և աջակցում է համայնքի հանրակրթական դպրոց(ներ)ի գործունեության կազմակերպմանը.

4) նպաստում և պայմաններ է ստեղծում նոր աշխատանքների ծևավորման համար.

5) կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.

6) ստեղծում է միջիամայնքային միավորումներ, ինչպես նաև անդամակցում է համայնքների հիմնադրամ միություններին.

7) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարեսավման ուղղությամբ.

8) աջակցում է զյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.

9) կազմակերպում է ագրարային կանոնների պահպանման աշխատանքները.

10) կազմակերպում է համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին (բնակչության) սոցիալական օգնության տրամադրումը.

11) կազմակերպում և իրականացնում է պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետության կողմից հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը:

IV. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՂՂԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՀԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

8. Համայնքի կամավոր խնդիրների լուծման և դրանց ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման ֆինանսավորումը իրականացվում է հետևյալ կարգով:

1) համայնքի կամավոր խնդիրների լուծումը և դրանց ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունները իրականացվում են համայնքի բյուջեի սեփական եկամուտների միջոցներով:

2) համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով կարող են նախատեսվել ֆինանսական միջոցներ, որոնք չեն կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:

3) համայնքի կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի դեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին

համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու համապատասխան որոշումների և (կամ) համաձայնության առկայության դեպքերում:

4) այն կամավոր խնդիրները, որոնց լուծումը չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանց կարող է իրականացնել ինքնուրույն:

5) համայնքի կամավոր խնդիրների (խնդրի) լուծման նախաձեռնությամբ կարող են հանդիս գալ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքի ընակիչները և տեղական ինքնակառավարման բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները:

6) համայնքի կամավոր խնդիրների (խնդրի) լուծման ցանկացած նախաձեռնության դեպքում, համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և դրա լուծման անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթյութերը (առկայության դեպքում):

7) համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 13-րդ կետի 6-րդ ենթակետում նշված անհրաժեշտ փաստաթյութերն սուսանալուց հետո՝ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը և իր կարծիքը. ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնությի ներկայացրած փաստաթյութերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնուած նախաձեռնությին:

8) համայնքի կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում, համայնքի ղեկավարը նախաձեռնությին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները և հիմքերը:

9) համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել համայնքի ավագանու անդամներ, համայնքի աշխատակազմի ներկայացուցիչներ, համայնքային վարչական և հայեցողական պաշտոն գրադիտնող անձինք:

10) սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ դիմումները մշտական գործող հանձնաժողովի կողմից քննարկելուց հետո, տախս է կամավոր խնդրի լուծման իրականացման համար եզրակացություն, նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափը և անհրաժեշտությունը:

11) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով:

12) համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում եմ բացուապես համայնքի ավագանու որոշմամբ:

Վ.ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՐԵՑՈՒՄԸ

9. Սույն կարգը վերանայվում է համայնքի ղեկավարի և (կամ) ավագանու նախաձեռնությամբ: Համայնքի ղեկավարը կարող է առաջարկություններ ներկայացնել համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգով կամ դադարեցնելու դրա գործողությունը: Իսկ համայնքի ավագանին, կարող է հանդիս գալ սույն կարգով փոփոխություններ և լրացումներ կատարելու նախաձեռնությամբ, օրենքով սահմանված ընթացակարգով:

10. Սույն կարգի մեջ փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը, գործողության դադարեցումը իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ:



ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԳՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱԶԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՄԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀՈԽԾՈՎ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երգնկա համայնքի կողմից սոցիալական աջակցություն տրամադրվում է համայնքի բնակչության դիմումների հիման վրա՝ համայնքի ղեկավարի որոշմամբ: Սոցիալական աջակցության տրամադրման անհրաժեշտ նախապայմաններն են:

1)համայնքի բնակիչ հանդիսանալը,

2)սոցիալական անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիրն կատարում և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտը չունենալը,

3)համայնքապետարանում գործող՝ համայնքում սոցիալական խնդիրների ռատանական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) դրական եզրակացությունը:

2.Հրատապ լրիտում պահանջող առանձին դեպքերում համայնքի ղեկավարը կարող է կայացնել սոցիալական օգնության հատկացման որոշումներ ինքնուժույն և սեփական պատասխանատվությամբ:

3.Սոցիալական աջակցությունը տրամադրվում է դրամական օգնության տեսքով:

4.Սոցիալական աջակցության տրամադրման որոշումներ կայացնելիս գործում են հետևյալ չափորոշիչները՝

1)գործադիր հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներ,

2)բազմազավակ ընտանիքներ (3 և ավելի անչափահան երեխա ունեցող),

3)միակողմանի կամ երկկողմանի ծնողագորկ երեխաներ ունեցող անապահով ընտանիքներ,

4)1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և հաշմանդամ ծնողներ կամ երեխաներ ունեցող անապահով ընտանիքներ,

5)գործազրուկի կարգավիճակ ունեցող անապահով անձինք,

6)առողջական խնդիրներ ունեցող (վիրահատության կամ թանձարժներ բուժման ենթակա) անապահով անձինք,

7)ընտանիքի անդամի հոտարկավորության կազմակերպման համար դրամական օգնության կամ տրանսպորտի տրամադրման խնդրանքով դիմած անապահով անձինք,

8) սոցիալական խոցելի խմբեր և այլ դեպքեր:

5.Սոցիալական անապահով ընտանիքներին կամ անձանց հատկացվող սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 30 000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Նույն ընտանիքն կամ անձին տարվա ընթացքում սոցիալական օգնություն կարող է հատկացվել մեկ անգամ:

6.Առանձին բացառիկ դեպքերում Հանձնաժողովի առաջարկության հիման վրա համայնքի ղեկավարը կարող է կայացնել սոցիալական օգնության՝ սույն կարգով չնախատեսված եղանակով և չափով տրամադրման որոշումներ, այդ մասին հաղորդում տալով առաջիկա ավագանու նիստում:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐՋՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երջվկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երջվկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91, norerzvka-village@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ
07 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 9

**ՆՈՐ ԵՐՋՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է:

Ի գիտություն ընդունել Նոր Երջվկա համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6

Դեմ -0 Զետեղական -0

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՇՈՎԱԿ

ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈԼԱՄ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻՔԵԿ

ՄԱՐԳԱՅԱՆ ՄԵՎԱԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԵՐՋԵԿԱՀԱՄԱՆԵԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԵՐՋՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2018 թՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նոր Երգենկա 2019թ.

Համայնքի ղեկավար Ալինա Հարությունյանը համայնքի ավագանուն ներկայացրեց 2018 թվականին ՀԶՍՀ իրականացման ընթացքի մասին հաղորդում

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Նոր Երգնկա համայնքը բարեկարգ ու մարուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ առաջատար տեղ զբաղեցնող, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները՝ նախադպրոցական կրթություն և դաստիարակություն, մշակութային, սպորտային ծառայություններ և այլն:

Նոր Երգնկա համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Գյուղի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով գյուղի աշխարհագրական դիրքը, համայնքը դարձնել պտղաբուծության, վերամշակման գոտի, մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դրույ կազմակերպությունների հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Նոր Երգնկա գյուղը գտնվում է ՀՀ մայրաքաղաք Երևանից 15 կմ հեռավորության վրա հյուսիս-արևելյան մասում, ծովի մակերեսույթից 1100-1400 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1965թվականին Խախելին Աշտարակի, Եղվարդ և Կարբի գյուղերի բազայի վրա: Ակզբնական շրջանում անվանվել է 41-րդ սովորության մտել է նորաստեղծ շրջանի կազմի մեջ: Այժմ գյուղը գտնվում է Կոտայքի մարզի վարչական կազմի մեջ, մարզկենտրոնից գտնվում է 55կմ հեռավորության վրա: Բնակչությունը հավաքվել է ՀՀ տարբեր շրջաններից:

Նոր Երգնկա համայնքի վարչական տարածքը կազմում է 1640.17 հա

2.1 ԺՈՂՈՎՐԴԱԳՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Նոր Երգնկա համայնքում ապրում է 1998 բնակիչ, որոնցից տղամարդիկ կազմում են 52 %-ը:

Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակում:

**Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները
(01.01.2019 թ. դրությամբ)**

Հ/Հ	Ցուցանիշները	Ըստամենք	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այլթվում՝	1998	956	1042
	մինչև 1 տարեկան	18	10	8
	1-2 տարեկան	26	14	12
	3-5 տարեկան	85	45	40
	6-9 տարեկան	124	54	70
	10-14 տարեկան	144	53	91
	15-17 տարեկան	83	45	38
	18-62 տարեկան	1258	595	663
	63-74 տարեկան	185	100	85
	75-ավել տարեկան	75	43	32
2.	Կենսաթոշակառուներ(ներառյալ հաշմանդամներ)այդ թվում՝			

	Տարիքային և աշխատանքային	170	87	83
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	7	4	3
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-	-	-
5.	Հաշմանդամ երեխաներ	10	6	4
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	-	-	-
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	-	-	-
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	15	-	15
9.	Հաշմանդամներ	5	-	5
10.	Զբաղվածներ			
11.	Գործազուրկներ	10	2	8
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցվածքների թիվը	80		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	5		

Համայնքի ունի 330 տնային տնտեսություն:

Գործազուրկների մեծամասնությունը կազմում էն կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով: Վերջին տարիներին նկատվում է ծնելիության աճ:

2.2 ՏԵՂԱԿԱՆ ԲՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԵՐԸ

Նոր Երգնկա համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում էն ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 6 անդամներով: Նոր Երգնկա համայնքի աշխատակազմը բաղկացած է 11 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը մասնակի վերանորոգված է: Այն գտնվում է Նոր Երգնկա համայնքի կենտրոնում: Աշխատակազմի աշխատանքի կատարման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Համայնքապետարանը դահլիճի կարիք ունի, հանրային մեծ քննարկումներ և

այլմիջոցառումներ կազմակերպելու համար:Վերանորոգման աշխատանքների ավարտից հետո կլուծվի այդ խնդիրը, բարեկարգ ու հաճելի տեսք կունենա նաև կայի բաժանմունքի տարածքը,որը գտնվում է համայնքապետարանի շենքում:

2018թվականին Նոր Երգնկայի համայնքապետարանի աշխատակազմն ունեցել է 11 աշխատակից:

Համայնքի ենթակառուցվածքներն են՝

1.Նոր Երգնկայի մանկապարտեզ ՀՊԱԿ 13 աշխատակից

2.Նոր Երգնկայի մշակույթի տուն ՀՊԱԿ 7 աշխատակից

2.3 ՀԱՍՏԱՏՎՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՍՏԱՏՎԱՅԻ ԵԽԱՎԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքը ունեցել է 1 արդյունաբերական ձեռնարկություն /կարի արտադրամաս/,որտեղ աշխատում էին համայնքից շուրջ 100 մարդ, սակայն այժմ չունի ոչ մեկը: Սակայն ներկայումս համայնքի տարածքում գործում են Աշտարակի Զոր ՓԲԸ, Զորակ-ՌՈՒ ՍՊԸ, Էներգիա ՍՊԸ, Էլեն ԲԲԸ կազմակերպությունները:

2.4 ՔԱՂԱՔԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒԽԱՀ ՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր Երգնկա համայնքը վերջին 4 տարիների ընթացքում տվել է շուրջ 14 ճարտարապետականական առաջադրանքներ, սա վկայում է այն մասին, որ համայնքը թեկուզ դանդաղ,բայց զարգացման ընթացքում է: Նախատեսում ենք առաջիկայում կազմել համայնքի տարածական զարգացումը սահմանող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի գլխավոր հատուկագիծ, քաղաքաշինական գոտիավորման նախագծեր, ինչպես նաև նախատեսվում է ունենալ քաղաքաշինական քարտեզ: Համայնքում չունենք կումունալ սպասարկման գրասենյակ:Համայնքում աղբահանության աշխատանքները 2018թվականին կատարվում էին ԱԶ Արմեն Խալաթյանի կողմից: Այդ կազմակերպության միջոցով համայնքում շաբաթական մեկ օր իրականացվել է աղբահանության աշխատանքները: Նոր Երգնկա համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 18-ի N 35-Ն որոշմամբ հաստատվել է «Նոր Երգնկա համայնքում աղբահանության վճար վճարողների

հաշվառման, աղքահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը»:

Խմբու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է 40 տարի առաջ և մի քանի անգամ ենթարկվելէ կապիտալ նորոգման,սակայն դեռևս կան որոշակի հատվածներ, որոնք կարիք ունեն կապիտալ նորոգումների: Վթարային վիճակում է գոնվում նաև կեղտաջրերի հեռացման կոյուղու համակարգը, որի պատճառով հաճախակի են խցանումներ լինում համայնքում: 2017թվականին համայնքի ջրահեռացման համակարգը (կոյուղագծերը) հանձնվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ի դեմս զյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի,սակայն համայնքում դեռևս կոմունալ սպասարկում չի իրականացվում:

Համայնքում առկա էր փողոցային լուսավորության համակարգ,սակայն այն հեռու էր բավարար լինելուց,հաճախակի էին խափանումները,որի վերականգնումը ծախսատար էր,ուստի խնդիր առաջացավ նոր էներգախնայող լուսադիոդային լուսատուններով հին լուսատունների փոխարինումը,տեղադրվեց 134 էներգախնայող լուսադիոդային լուսատուններ,որը ապահովում է 68 % էներգախնայողություն: Համայնքի նոր թաղամասը նույնականացվել է ջրահողական գործություն գանցի կառուցման:

Համայնքը ամբողջովին գրեթե գազաֆիկացվել է,գազաֆիկացված չէ նոր թաղամասը,որի համար անհրաժեշտ է 27023.1 հազ. դրամ:

2.5 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐՍՔՆԵՐԻ ՄՊԱՍՄԱՐԿՈՒՄ

Համայնքում կա 108 հատ շենքեր և 64 բնակարաններ: շենքերը շահագործման են հանձնվել 1965-1990 թվականներին, 28557թմ տարածքով:

Աղյուսակ -ում ներկայացված է Նոր Երգնկա համայնքի բնակելի շենքերի և բնակելի տների թիվը 01.01.2019թվականի դրությամբ

Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակելի առանձնատների թիվը

Հ/Հ	Բազմաբնակարան շենքեր	բնակելի շենքերի թիվը	
		բնակելի շենքերի թիվը	բնակելի շենքերի թիվը
1.	Մեկ հարկանի	18	18
2.	Երկու հարկանի	90	90

առանձնատներ	64
Ընդամենք	172

2.6 ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Նոր Երգնկա համայնքի վարչական տարածքը կազմում է 1640,17 հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1370.57հա.-ը, բնակավայրերը գրաղեցնում են 132.88 հա., արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրականնշանակությանօբյեկտները՝ 14.81հա, Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 6.96 հա., հատուկ պահպանվող տարածքները՝ 40.48 հա, ջրային հողերը՝ 74.47 հա, պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 121.72 հա:Բնակավայրի տարածքը կազմում է 88.2հա:

2007 թվականին համայնքում ներդրվեց հողերի խոշորացման ծրագիր,որի արդյունքում տարեց-տարի ավելանում է բազմամյա տնկարկների տարածքները:

2.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր Երգնկա համայնքում գյուղացիական տնտեսությունները հիմնականում գրաղված են դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ, ընդհանուրապես գյուղատնտեսության բնագավառում գրաղված է համայնքի բնակչության 70%-ը: Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում գրաղված են բազմամյա խոտարույսերի, պտղի և խաղողի, ինչպես նաև բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությամբ, որը խիստ զգայուն է շրջակա միջավայրի նկատմամբ և մեծապես կախված է բնության քմահաճույքից:

Հողերը համարվում են ոռոգուի հողատարածություններ: Ոռոգման ջուր մատակարարվում է Արագածոտն ԶՀ-ի կողմից: Գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար համայնքում առկա է 7 տրակտոր, 10 բեռնատար ավտոմեքենաներ, 7 կցասայլեր, 2 մամլիչ-բարդողիչներ, 5 գութան, 2 շարքացան:

ՆՈՐ ԵՐՉՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳԼԱՔԱՆԱԿԸ

	Ցուցանիշները	01.01.2019 թ. Դրույթամբ
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝ Կովեր	1090 850
2.	Խոզերի գլխաքանակը	150
3.	Ռշխարների և այծերի գլխաքանակը	780
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	-
5.	Զիերի գլխաքանակը	-
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	7500
7.	Մեղվարնտանյիրների քանակը	150

2.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղքահանության գործընթացն իրականացվում է շաբաթական մեկ անգամ ԱԶ Արմեն Խալաթյանի միջոցով: Համայնքում ոռոգման ջուրը մատակարարվում է Աշտարակի ԶՕԸ-ի կողմից: Համայնքում չկան անտառապատ տարածքներ, ջրավագաններ և հատուկ պահպանվող տարածքներ:

2018թվականին համայնքի տարածքում կատարվեց ծառատունկորը պետք է կրի շարունակական բնույթ:

Համայնքն ունի երեխանների համար նախատեսված խաղահրապարակ, սակայն անհրաժեշտ է այնտեղ տեղադրել ժամանակակից խաղեր:

Սակայն այս ամենով հանդերձ համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում դեռևս պետք է կատարել հետևյալ միջոցառումները:

Ավելացնել համայնքի կանաչապատ տարածքները, բարեկարգել գրոսայգին, համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ, ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները, ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում:

2.9 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏԻՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր երգներ համայնքն ունի 17 կմ երկարությամբ ներքնակավայրի ճանապարհներ, և փողոցներ, 20 կմ երկարությամբ այգիներ տանող հիմնական

դաշտամիջյան ճանապարհները: 2013-2015 թվականներին կատարվել են 1-ին և 3-րդ փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքները: Ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատ լինելով մշտապես պահանջում են վերանորոգում, իսկ նոր կառուցվող թաղամասերի ճանապարհները գրունտային են:

Համայնքը բաղկացած է 2 բնակավայրից,որոնք իրար կապողը համայնքի 3-րդ փողոցն է,որի վերջնական կապիտալ նորոգումը դեռևս ավարտված չէ: 2017թվականին հրատապ ծրագրերի շրջանակում կապիտալ նորոգման ենթարկվեց համայնքի 8-րդ փողոցը,իսկ համայնքի բյուջեի միջոցներով փոսային ընթացիկ նորոգումներ կատարվեց համայնքի 3-րդ փողոցում:

2018թվականին պետական բյուջեից տրված սուբվենցիայով և համայնքի ներդրումով կապիտալ նորոգվեց համայնքի 3-րդ փողոցի և մի հատված:

Համայնքում աշխատում էր Նոր Երգնկա-Երևան երթուղայինը, սակայն այն դադարեցրեց աշխատել: Ուսանողների սպասարկման համար անհրաժեշտ է գոնե մեկ երթուղային, որը կուղերվի դեպի մայրաքաղաք : Այս հարցով դիմել ենք տրանսպորտի և կապի նախարարություն, ակնկալելով հարցի կարգավորում:

Համայնքի բնակավայրերում տեղադրված կանգառներ չկան, անհրաժեշտ է տեղադրել բազմաֆունկցիոնալ կանգառներ:

Համայնքում տեղադրված են տեղեկատվական վահանակներ՝ համայնքում մատուցվող ծառայությունների և այլնի մասին, ցուցանակներ, որոնք կավելացնեն բնակչության տեղեկատվածությունը, համայնքում տեղադրված շեն ճանապարհային նշաններ, որը նույնպես շատ կարևոր է: Սակայն համայնքի փողոցները ամբողջովին համարակալված են անհրաժեշտ ցուցանակներով:

2.10 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոր Երգնկա համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի խանութներ:

Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են աղյուսակում:

**Նոր Երգնկա համայնքի արտադրական, առեվտրային եվ
ծառայություններ մատուցող կազմակերպություններ
առ 01.01.2019թ դրությամբ**

Արտադրական կազմակերպություն ներ	Առևտրային կազմակերպություններ	Ծառայություններ մատուցող կազմակերպություն ներ
<input checked="" type="checkbox"/> Ա/Զ Վարդան Անտոնյան Ա/ՉՄարիեսոս Օհանյան Ա/ՉՆվարդ Մկրտչյան Ա/Զ Գոռ Գևորգյան ԱՀ Արտեն Առաքելյան	<input checked="" type="checkbox"/> 5 (հինգ) սննդի և տնտեսական ապրանքների խանութներ	

Առևտրի և սպասարկման ոլորտներում գրաղվածների թիվը կազմում է շուրջ 5 մարդ:

2.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նոր Երգնկա համայնքում գործում են հիմանարողական հանրակրթական միջնակարգ 1 դպրոց: Դպրոցը ջեռուցվում է զազի անհատական ջեռուցման համակարգով: Համայնքն ունի մեկ նախադպրոցական ուսումնական հաստատություն (ՆՈՒՀ), որի հզորությունը նախատեսված է 120 երեխաների համար, սակայն ներկա դրությամբ մանկապարտեզ են հաճախում շուրջ 60 երեխա 2 խումբ, որոնց սպասարկում են 13 աշխատողներ: Մանկապարտեզի շենքը կապիտալ վերանորոգված է, ինչպես նաև նորացվել է գույքը, սակայն ունի գույքի ձեռքբերման կարիք: Մանկապարտեզը չուներ ջեռուցման համակարգ, որի պատճառով գործում էր 7 ամիս: 2018թվականին համայնքի ներդրումով և պետական սուրվենցիայի գումարով կառուցվեց ջեռուցման համակարգ, որը հնարավորություն կտա որպեսզի մանկապարտեզը աշխատի ամրող հզորությամբ և ամբողջ տարին, ինչպես նաև կստեղծվեն նոր աշխատատեղեր համայնքի երիտասարդ կայութերի համար: Համայնքի ՆՈՒՀ-ը

աշխատում է 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, տրվում է երեք անգամյա սնունդ: Ավագանու որոշմամբ ՆՈՒՀ-ում ծնողական վճարի չափը սահմանված է 6000 (վեց հազար) դրամ:

Աղյուսակ -ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Նոր Երգնկա համայնքի հանրակրթական դպրոցի, նախադպրոցական հաստատության և մշակույթի տան վերաբերյալ ցուցանիշներ

Հ/Կ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	«Նոր Երգնկայի միջն. դպրոց» ՀՊԱԿ	36	256
2.	«Նոր Երգնկայի մշակույթի տուն» ՀՊԱԿ	7	40
3.	«Նոր Երգնկայի մանկապարտեզ» ՀՊԱԿ	13	60

Նոր Երգնկա համայնքում գործում է առողջության առաջնային պահպանության մեկ կազմակերպություն՝ Նոր Երգնկայի ԱԱԴԿ:

ԱԱԴԿ-ի շենքը մասնակի վերանորոգված է, ունի վերանորոգման կարիք, ապահովված չէ ջեռուցման համակարգով:

2.12 ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ, ԵՐԻՏԱՍՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նոր Երգնկա համայնքում հիմնովին վերանորոգված շենքում գործում է «Նոր Երգնկայի մշակույթի տուն» ՀՊԱԿ-ը, որտեղ գործում «Երիզա» ժողովրդական պարի խումբը: Այստեղ սովորում են շուրջ 40 երեխա, որոնց սպասարկում է 1 պարուսուց: Այստեղ տարվա ընթացքում կազմակերպվում են միջոցառումներ նվիրված միջազգային, հանրապետական և համայնքային տոններին: Մշակույթի տանը գործում է շախմատի, նկարչության խմբակներ: Մշակույթի տանը գտնվում է նաև համայնքի գրադարանը, որտեղ կա շուրջ 7295 կտոր գրականություն և տարեկան սպասարկում է 387 ընթերցող: Համայնքն ունի www.norerzrnka.am ինտերնետային վեբ կայքը, որտեղ տեղ է

գտնում համայնքային նորությունները, համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները, համայնքի դեկապարի, համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները, կարգադրությունները, համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը և դրանց տնօրինումն ըստ կատարման ժամկետների, ինչպես նաև հայտարարություններ:

2.13 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ. ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որտեղ աշխատում են 1 բժիշկ և 2 բուժքույրեր, շենքը մասամբ վերանորոգվել է Սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով, որտեղ համայնքը նույնպես կատարել է 2250.0 հազար դրամի ներդրում, վերանորոգելով շենքի տանիքը: Քայլեր են ձեռնարկվում համայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Համայնքի տարածքում սպորտահիմներ, ֆուտբոլի դաշտ առկա են միայն դպրոցում, սակայն սպորտահիմնում պակասում է համայնտասխան գույքը:

2.14 ՀԱՆԳՈՒՄԻ ԳՈՏՔՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՐԱՊԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻ ՏԱՐԱԾԵԼԵՐ

Համայնքն ունի 0.26 հա տարածքով գրոսայզի, որի տարածքում կառուցված է Ղարաբաղյան պատերազմի զոհվածների հուշարձան-կոթողը: Տարածքը ամբողջովին ծառապատված է, տեղադրված են համայնքի անունով նատարաններ և աղբամաններ, անհրաժեշտ է տեղակայել նաև երեխանների համար նախատեսված կառուսելներ : Համայնքի տարեցների համար կառուցվել է 2 գրուցարան, որտեղ իրենց ժամանակն են անցկացնում համայնքի տարեց բնակիչները: Համայնքն ունի նաև հանդիսավորությունների սրահ տարբեր բնույթի միջոցառումների անզկազման համար:

2.15 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՋՈՒԹՅՈՒՆ

